



Նաիրի Ինշուրանս  
Ապահովագրական ընկերություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 11.02.2011թ. թիվ 12 որոշմամբ

## ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության կանոնները (այսուհետև՝ Կանոններ) մշակված են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2 «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ Ապահովագրող) կողմից իրականացվող Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ոչ կյանքի ապահովագրության տեսակի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն», «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն», «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)» և «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն» դասերի մեջ:

1.3 Օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների հիման վրա Ապահովագրողը կնքում է Շինմոնտաժային աշխատանքների ապահովագրության պայմանագիր և (կամ) ապահովագրության վկայագիր (այսուհետև՝ ապահովագրության վկայագիր և ապահովագրության պայմանագիր հասկացությունների փոխարեն Կանոններում կօգտագործվի «Պայմանագիր» հասկացությունը) իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձանց հետ (այսուհետև՝ Ապահովադիր):

1.4 Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում սահմանված վճարի (այսուհետև՝ ապահովագրավճար) դիմաց Պայմանագրով նախատեսված դեպքի (այսուհետև՝ ապահովագրական պատահարի) ի հայտ գալու պարագայում փոխհատուցել Ապահովադիրին կամ այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը (այսուհետև՝ Շահառու) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը (ապահովագրական հատուցում) Պայմանագրում սահմանված գումարի (ապահովագրական գումար) շրջանակներում:

1.5 Կանոնները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չեն հակասում Կանոններին, օրենքին և այլ իրավական ակտերին:

1.6 Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիր կնքել ինչպես իր օգտին, այնպես էլ հօգուտ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի (այսուհետև՝ Շահառու)՝ Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու համար:

1.7 Ապահովադրի կամ Շահառուի մոտ ապահովագրված գույքի պահպանման նկատմամբ շահագրգռվածության բացակայության պարագայում կնքված Ապահովագրության պայմանագիրը, կնքման պահից, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով համարվում է առաջին:

1.8 Ապահովադիրն վերաբերող Կանոնների բոլոր դրույթները, հավասարապես տարածվում են նաև Շահառուի վրա, եթե դա չի հակասում գործող օրենսդրությանը:

**ԲԱԺԻՆ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

2.1 Ապահովադրի ներկայացուցիչներ՝ ապահովագրության օբյեկտ հանդիսացող շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող բոլոր կազմակերպություններ և դրանց աշխատակիցներ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

2.2 «Աշխատանքների լրիվ դադարեցման ժամանակաշրջան»՝ շինմոնտաժային աշխատանքների դադարեցում անհայտ ժամանակով և անավարտ շինարարական օբյեկտների կոնսերվացիա:

2.3 «Աշխատանքների մասնակի դադարեցման ժամանակաշրջան»՝ շինմոնտաժային աշխատանքների ժամանակավոր (մինչև 3 ամիս) դադարեցում, հաստատված Գլխավոր կապալառուի համապատասխան ներքին փաստաթղթերով, որը հետևանք է ֆինանսավորման դադարեցման, կամ վերապլանավորման կամ շինարարության մասնակիցներից որևէ մեկի շինարարական գործունեություն իրականացնելու լիցենզիան ետ կանչելու կամ դադարեցնելու հետ:

2.4 Գետնի նստվածք՝ գետնի բնական իջեցում բնական խոռոչների վրա (լեռնախոռոչների, ճեղքվածքների):

2.5 Գրունտային ջրերով ողողում՝ գրունտային ջրերի մակարդակի բարձրացում, պայմանավորված նախկինում անջուր գրունտների ողողմամբ՝ ջրի՝ ջրատարների ափերով և հատակով, գետերով ֆիլտրացիայով, գետերի հունի փոփոխմամբ, ջրատար և կոյուղու համակարգերից ջրի կորուստով և այլն:

2.6 Գույքագրում՝ կազմակերպության գույքի թվաքանակի ստուգում՝ հաշվապահական հաշվեկշռի տվյալների համաձայն:

2.7 Երկրաշարժ՝ տորգետնյա ցնցումներ և տատանումներ, որոնք պայմանավորված են բնական պատճառներով:

2.8 Էլեկտրական սարքավորումներ՝ ցանկացած օբյեկտ, որում իրականացվում է էլեկտրաէներգիայի արտադրություն, բաշխում, փոխանակում կամ սպառում (այդ թվում՝ էլեկտրական մալուխներ և լարեր):

2.9 Լրիվ կործանում՝ ապահովագրված գույքի վերականգնման տեխնիկական անհնարիություն կամ վերջինիս այնպիսի վիճակ, երբ վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են ապահովագրական պատահարը վրա հասնելու պահին ապահովագրված գույքի իրական արժեքը, այսինքն վերականգնումը հանդիսանում է տնտեսապես ոչ նպատակահարմար:

2.10 Կայծակի հարված՝ ապահովագրված գույքի վրա մթնոլորտային էլեկտրական լիցքի ուղղակի ընկնում:

2.11 Կարկուտ՝ սառցե կտորների տեսքով մթնոլորտային տեղումներ (կարկտահատ):



- 2.12 **Կոտրանքի միջոցով կոդոպուտ**՝ ուրիշին պատկանող գույքի հափշտակում շինությունից կան պահեստարանից՝ կոտրանքի միջոցով:
- 2.13 **Հրդեհ**՝ այրում բաց կրակի կամ թույլ վառվող կրակի տեսքով, որն առաջացել է դրա համար հատուկ չնախատեսված տարածքներում կամ տարածվել է այդ չնախատեսված տարածքներից դուրս և ընդունակ է ինքնուրույն տարածվել հետագայում:
- 2.14 **Չյան մեծ զանգվածակույտ**՝ ձյան կամ սառույցի շարժվող զանգված, որը սահելով իջնում է լեռնալանջից:
- 2.15 **Մեկ ապահովագրական դեպքով Ապահովագրողի պատասխանատվության սահման**՝ վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափ՝ ապահովագրված գույքի առանձին խմբերի, ապահովագրական ռիսկերի, մեկ ապահովագրական դեպքով (պատահարով) ապահովագրված ծախսերի գծով:
- 2.16 **Ոչ պայմանական չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ ապահովագրության օբյեկտին պատճառված վնասի այն մասը, որը Ապահովագրողի կողմից ենթակա չէ հատուցման:
- 2.17 **Պայթյուն**՝ սահմանափակ ծավալով, կարճ ժամանակահատվածում, մեծ քանակությամբ էներգիայի անջատման սրընթաց պրոցես, որն առաջացել է գազի կամ գոլորշու ընդլայնման ձգտման հետևանքով:
- 2.18 **Պահեստարաններ**՝ շենքեր, շենքի մասեր կամ շինություններ, նախատեսված մարդկանց ժամանակավոր այնտեղ գտնվելու կամ արտադրական կամ այլ ծառայողական նպատակներով նյութական արժեքներ պահպանելու համար, պայմանով, որ դրանք ապահովված են հատուկ տեխնիկական անվտանգության միջոցներով (էլեկտրոնային կամ մեխանիկական), օրինակ՝ հակաառևանգիչ համակարգով, էլեկտրոնային փականներով:
- 2.19 **Ջրհեղեղ**՝ ապահովագրության տարածքի հանկարծակի ջրով ծածկում (ջրի տակ անցում), որը հետևանք է գետի, լճի, ծովի կամ այլ բնական կամ արհեստական ջրամբարների ջրի մակարդակի բարձրացման, պատնեշների ճեղքվածքների, սահմանագատող ամբարտակների, ցունամիների, ինչպես նաև հորդառատ անձրևների:
- 2.20 **Սողանք (փյուզում)**՝ բնահողի բնական սափք, քարերի և հողակույտերի վայր անկում՝ ներառյալ քարաթափը և ցեխաջուրը:
- 2.21 **Վնասվածք**՝ օրգանական ամբողջականության կամ օրգանի խախտում, որն ուղեկցվում է ֆունկցիոնալ խանգարումով և պայմանավորված է արտաքին միջավայրի ազդեցության տարբեր գործոններով:
- 2.22 **Փոքորիկ**՝ 17,2 մ/վ (Բոֆորտի սանդղակով 8 բալ և ավելի ուժգնությամբ) միջինից բարձր արագությամբ քամի՝ հարթ տարածքում և 25 մ/վ արագությամբ քամի՝ նախալեռնային և լեռնային տարածքներում:

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը կապված գույքի օգտագործման, տնօրինման, տիրապետման հետ (այդ թվում գողության, կողոպուտ, ավազակություն), որոնք հանդիսանում են շինմոնտաժային աշխատանքների իրականացման առարկան և միջոցը:

**3.1 Շինմոնտաժային գույքի ապահովագրություն:**

**3.2.1 Շինմոնտաժային գույքի ապահովագրության գծով Կանոնների համաձայն ապահովագրվում են՝**

- ա) Շինարարական աշխատանքները, ներառյալ կառուցվող օբյեկտներ, շինարարական նյութերը և կոնստրուկցիաները, աշխատավարձի վճարման ծախսերը, փոխադրման ծախսերը, մաքսավճարները և հարկերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված և շինարարական աշխատանքների իրականացման համար առարկա կամ միջոց հանդիսացող այլ գույք,
  - բ) Մոնտաժային աշխատանքները, ներառյալ կառուցվող օբյեկտները, մոնտաժվող սարքավորումները, նյութերը, փոխադրման ծախսերը, մաքսավճարները և հարկերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված և մոնտաժային աշխատանքների իրականացման համար առարկա կամ միջոց հանդիսացող այլ գույք,
  - գ) Շինարարական հրապարակում գտնվող սարքավորումները (ժամանակավոր շինություններ, հարմարանքներ, պահեստային տարածքներ, ինժեներական կոմունիկացիաներ և այլն),
  - դ) Շինարարական մեքենաները և սարքավորումները՝ հողափոր տեխնիկա (բուլդոզերներ, էքսկավատորներ և այլն), ճանապարհաշինարարական տեխնիկական (ասֆալտ հարթեցնող մեքենաներ և այլն), շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար շինարարական տեխնիկական և սարքավորումներ՝ կցված շինարարության օբյեկտին (վերամբարձ կռունկներ, ամբարձիչներ, բետոնախառնիչներ և այլն), շինարարական տեխնիկայի այլ տեսակներ,
  - ե) Պայմանագրում նշված տարածքի մաքրման աշխատանքները, երբ վնասը հասցվել է ապահովագրական պատահարի հետևանքով վնասված գույքի բեկորներից (մնացորդներից):
- 3.3 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով կարող է տրամադրվել նաև՝**
- ա) Ապահովադրի՝ երրորդ անձանց նկատմամբ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրություն,
  - բ) շինմոնտաժային աշխատանքների ընթացքում Ապահովադրի աշխատողների դժբախտ պատահարներից ապահովագրություն,
  - գ) թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների ապահովագրություն:
- 3.4 Երրորդ անձանց հանդեպ Ապահովադրի պատասխանատվությունը:**



3.4.1 Ապահովագրողը կրում է իրավական պատասխանատվություն և պարտավորություն հատուցելու ապահովագրական պատահարի հետևանքով երրորդ անձին պատճառված մարմնական վնասվածքի և/կամ հիվանդության դիմաց, որոնք ուղղակիորեն կապված են շինմոնտաժային աշխատանքների հետ և տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

3.4.2 Պայմանագրում կարող է սահմանվել առավելագույն պատասխանատվության չափ (ապահովագրական գումար) յուրաքանչյուր անձի կամ յուրաքանչյուր առանձին պատահարի համար, որի սահմաններում Ապահովագրողը կրում է իրավական պատասխանատվություն և պարտավորվում է հատուցել՝

- ա) դժբախտ պատահարի հետևանքով երրորդ կողմի նյութական արժեքների կորուստը,
- բ) դժբախտ պատահարի հետևանքով խոչընդոտ, հարմարության խախտում կամ կորուստ, օտար տարածքի ներխուժում կամ տեղաշարժման, լույսի, օդի կամ ջրի հետ կապված ցանկացած կորուստ կամ խախտում, որը ուղղակիորեն կապված է շինմոնտաժային աշխատանքների հետ և տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

**3.4.3 Կանոններով Ապահովագրողն Ապահովադրին լրացուցիչ կվճարի՝**

- ա) դատական հետաքննության բոլոր ծախսերը և հատուցումները, որոնք վճարվել են հայցվորին դատարանի որոշմամբ,
- բ) բոլոր ծախսերը և վճարումները, որոնք կատարվել են Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ:

**3.4.4 Ապահովագրական պատահար չեն համարվում՝**

- ա) ծախսերը, որ կատարվել են որևէ իրի վերափոխման, բարելավման, վերանորոգման կամ փոխարինման համար.
- բ) սեփականության կորուստը կամ վնասը, որը պատկանում և գտնվում է Ապահովադրի աշխատողի պահպանության, պաշտպանության կամ նրա վերահսկողության տակ.
- գ) պատասխանատվությունը, որը հանդիսանում է Ապահովադրի աշխատողի մարմնական վնասվածքի կամ հիվանդության արդյունք.
- դ) վնասը կամ կորուստը, որը կարող էին կանխատեսվել որպես անխուսափելի՝ կապված դրանց իրականացման ձևի կամ դրանց կատարման եղանակի հետ:

**3.5 Շինմոնտաժային աշխատանքների ընթացքում Ապահովադրի աշխատողների դժբախտ պատահարներից ապահովագրություն:**

3.5.1 Ապահովագրողը Կանոնների համաձայն սահմանված ապահովագրական գումարի սահմաններում հատուցում է դժբախտ պատահարի հետևանքով Ապահովադրի աշխատակցին հասցված վնասները՝ Կանոնների 3.5.4 կետի համաձայն:

3.5.2 Կանոնների համաձայն չեն ապահովագրվում 70 տարեկանից բարձր անձինք և 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները:

**3.5.3 Ապահովագրական պատահար են համարվում շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելու ընթացքում տեղի ունեցած դեպքերը, որոնք արդյունք են՝**

- ա) վնասվածքի, որը Ապահովադրի աշխատողը (ապահովագրված անձը) ստացել է շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես նաև երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,
- բ) օտար մարմնի շնչառական ուղիներ ընկնելու, հոգնածության կամ ցրտահարության,
- գ) թունավոր բաղադրությամբ նյութով կամ կենդանական կամ բուսական ծագում ունեցող նյութով թունավորման,
- դ) բոտուլիզմով, փայտացմամբ (պրկախտ) կամ կատաղությամբ հիվանդանալու,
- ե) կենդանիների և միջատների հարձակման:

3.5.4 Ապահովադրի աշխատակցի դժբախտ պատահարի հետևանքով ժամանակավոր անաշխատունակության դեպքում վճարման ենթակա հատուցումը կազմում է ստացիոնար բուժման դեպքում՝ օրական 0,8 % համապատասխան ապահովագրական գումարից, սակայն ոչ ավելի, քան այդ ապահովագրական գումարի 40 %-ը, իսկ ամբուլատոր բուժման դեպքում՝ օրական 0,4 % համապատասխան ապահովագրական գումարից, սակայն ոչ ավելի, քան այդ ապահովագրական գումարի 30 %-ը:

Եթե Ապահովադրի աշխատակիցը ստացել է և ստացիոնար և ամբուլատոր բուժում, ապա Ապահովագրողի կողմից հատուցվում է սույն կետում սահմանված կարգով հաշվարկված հատուցման ենթակա գումարների հանրագումարը, սակայն ոչ ավելի, քան Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 50 %-ը:

Ապահովադրի աշխատակցի դժբախտ պատահարի հետևանքով մշտական անաշխատունակության դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում հետևյալ չափերով՝

- ա) 1-ին խմբի հաշմանդամության հաստատման դեպքում՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 85 % -ը.
- բ) 2-րդ խմբի հաշմանդամության հաստատման դեպքում՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 70 % -ը.
- գ) 3-րդ խմբի հաշմանդամության հաստատման դեպքում՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի 55 % -ը:

Ապահովադրի աշխատակցի դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի ամբողջ չափով:



**3.5.5 Ապահովագրական պատահար չեն համարվում տեղի ունեցած դեպքերը, որոնք հետևանք են՝**

ա) Ապահովադրի աշխատողի կողմից ավտոմոբիլի, ուժեղ ազդեցությամբ (թմրանյութ պարունակող) դեղամիջոցի, եթե վերջիններս ընդունվել են առանց բժշկի նշանակման, կամ արբեցման նպատակով տոքսիկ նյութերի օգտագործման,

բ) Ապահովադրի աշխատողի (ապահովագրված անձի) կողմից ավտոմոբիլի, թմրանյութի կամ տոքսիկ նյութի ազդեցության տակ տրանսպորտային միջոց վարելու կամ մեքենա-սարքավորում աշխատացնելու,

գ) Ապահովադրի աշխատողի (ապահովագրված անձի) կողմից տրանսպորտային միջոցը կամ մեքենա-սարքավորումն ավտոմոբիլի, թմրանյութի կամ տոքսիկ նյութի ազդեցության տակ գտնվող կամ համապատասխան իրավունք (վարորդական իրավունք) չունեցող անձին տրամադրելու(լիազորելու),

դ) ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրված անձն ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ է կատարել երրորդ անձի կողմից անօրինական գործողության ազդեցության հետևանքով և դա հաստատված է դատարանի ուժի մեջ մտած որոշմամբ,

ե) Ապահովագրված անձի կողմից կանխամտածված կերպով ինքն իրեն հասցրած մարմնական վնասվածքի,

զ) միջուկային էներգիայի ուղղակի կամ անուղղակի ազդեցության:

**3.6 Թողարկումից հետո երաշխիքային պարտավորություններ:**

3.6.1 Կանոնների համաձայն ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված Ապահովադրի մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման հետ, որոնք պայմանավորված են նրա կողմից կառուցված շենքին (շինությանը, ճանապարհին) կամ տեղադրված սարքավորմանը հասցված վնասի հատուցման պարտավորության հետ, որը հետևանք է շինմոնտաժային, թողարկման-կարգավորման աշխատանքների և ետթողարկման երաշխիքային աշխատանքների կատարման ընթացքում թույլ տրված թերությունների, պայմանով, որ դրանք ի հայտ են եկել ետթողարկման երաշխիքային պարտավորությունների ժամանակահատվածում:

**3.6.2 Ապահովագրական պատահարներ չեն համարվում՝**

ա) լրացուցիչ ծախսերը, որոնք առաջացել են հեղուկ վառելանյութերի, սառեցնող հեղուկների և այլ օժանդակող նյութերի, ապահովագրված առարկաներով արտադրվող կամ մշակվող արտադրանքի կործանման կամ վնասման արդյունքում.

բ) լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են Ապահովադրի կողմից օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների թերությունների վերացման, որը հանդիսանում է կամ կարող է պատճառ հանդիսանալ ապահովագրական պատահար տեղի ունենալու, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

գ) լրացուցիչ ծախսերը, որոնք հետևանք են ցանկացած անուղղակի վնասի, մասնավորապես, ակնկալվող շահույթի կորստի կամ ենթակապալային աշխատանքների կատարման ընթացքում նշանակված տուգանքների:

3.6.3 Եթե Ապահովագրության պայմանագրով սահմանված է մեկ ապահովագրական դեպքի համար Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն չափ, ապա միևնույն ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված բոլոր վնասների համար ապահովագրական հատուցումը, ներառյալ վնասի նվազեցման և կանխման նպատակով կատարված ծախսերը, չի կարող գերազանցել այդ սահմանը:

**3.6.4 Վնասի չափը որոշվում է՝**

ա) Կառուցված/վերանորոգված օբյեկտի կործանման դեպքում՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին դրա իրական արժեքի չափով՝ մասհանած հետագա օգտագործման համար պիտանի առկա մնացորդների արժեքը:

բ) Կառուցված/վերանորոգված օբյեկտի վնասման դեպքում գույքի ապահովագրական պատահարից անմիջապես առաջ եղած վիճակը վերականգնելու համար կատարված ծախսերը, այդ թվում՝

- վերանորոգման համար անհրաժեշտ պահեստամասերի և նյութերի գնման ծախսերը,
  - վերանորոգման վայր պահեստամասերի և նյութերի տեղափոխման ծախսերը,
  - վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը:
  - այլ ծախսերը, բայց միայն այն դեպքում, եթե դա անմիջապես նշված է Ապահովագրության պայմանագրում:
- Ընդ որում, վերականգնողական ծախսերը պետք է նվազեցվեն ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին վնասված գույքի մաշվածության չափով:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՏՈՒՑՈՒՄԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

4.1 Ապահովագրական ռիսկ է համարվում պատահարի տեղի ունենալու հավանականությունը, որի հետ կապված իրականացվում է ապահովագրություն:

4.2 Ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրության պայմանագրով նախատեսված և տեղի ունեցած իրադարձությունը, որի հետ կապված ի հայտ է գալիս Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Շահառուին), երրորդ անձանց ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:

4.3 Կանոնների համաձայն Ապահովագրողը հատուցում է Ապահովադրին «բոլոր ռիսկերի համար պատասխանատվությամբ» վնասները (իրական վնասը), որոնք առաջացել են որևէ չկանխատեսվող կամ հանկարծակի նյութական ազդեցության հետևանքով ապահովագրության օբյեկտի կործանման կամ վնասման արդյունքում՝ բացառությամբ **Կանոնների 4.45, 4.46 կետերով նախատեսված դեպքերի**, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:



4.4 Չկանխատեսվող և հանկարծակի են հանդիսանում շինարարական ոլորտում սովորական պրակտիկա հանդիսացող այնպիսի նյութական ազդեցությունները, որոնք Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները կամ չեն կարողացել կանխատեսել ժամանակին, կամ որոնք հնարավոր չէր կանխատեսել հիմնվելով մասնագիտական փորձի վրա:

**4.5 Ապահովագրություն կարող է իրականացվել մասնավորապես հետևյալ ռիսկերից.**

- ա) հրդեհի, պայթյունի, կայծակի հարվածի, թռչող սարքերի ընկնումից,
- բ) տարերային աղետների (փոթորիկի, կարկուտի, երկրաշարժի, ձյան զանգվածակույտերի սողանք, ջրհեղեղի, փլուզումների),
- գ) գետնի նստվածքի,
- դ) գրունտային ջրերով ողողման,
- ե) ապահովագրված գույքի վնասմանն ուղղված երրորդ անձանց կանխամտածված գործողությունների, կոտրանքի միջոցով գողության, կողոպուտի, ավազակության,
- զ) ինժեներական ցանցի վթարի (ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու),
- է) մոնտաժման սխալների,
- ը) օբյեկտի փլուզման կամ վնասման, այդ թվում փլուզվող կամ ընկնող մասերի,
- թ) շինհրապարակում տեղի ունեցած որևէ այլ հանկարծակի և չկանխատեսված իրադարձությունների, որոնք Կանոններով կամ Ապահովագրության պայմանագրով բացառված չեն:

4.6 **Հրդեհի կողմից պատճառած վնաս ասելով հասկացվում է** ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է կրակի անմիջական ազդեցությունից, բարձր ջերմաստիճանից, հրդեհի հետևանքներից (ծուխ, մուր և այլն), ինչպես նաև հրդեհը հանգցնելու միջոցառումների իրականացման ժամանակ ապահովագրված գույքին հասցված վնասի արդյունքում:

**4.7 Հրդեհից ապահովագրության դեպքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն՝**

- ա) ապահովագրված գույքին կրակի կամ բարձր ջերմաստիճանի հասցրած վնասը, որն առաջացել է մշակման կամ վերամշակման կամ այլ նպատակով նրա վրա կրակի կամ տաքության ազդեցությամբ, այդ թվում այն գույքին պատճառված վնասը, որի միջոցով կամ որի մեջ ստեղծվում են կրակը կամ տաքությունը կամ, որը հատուկ նախատեսված է դրա ծագման, պահպանման, տարածման կամ փոխանցման համար:
- բ) ապահովագրված գույքին հասցված վնասը, որը առաջացել է բուխարուց կամ վառարանից և այլն, դուրս ընկած կամ վառվող ածուխների խանձման կամ վառման հետևանքով, կապված իր համար հատուկ նախատեսված տարածքից կրակի հանկարծակի դուրս գալու հետ, բացի հրդեհի առաջացման դեպքից:
- գ) էլեկտրական սարքավորումներին հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի (ներառյալ կարճ միացումը, հոսանքի ուժի կամ լարման բարձրացումը) հետ կապված, ուղեկցվել է կայծերով կամ տաքությամբ, բացառությամբ բաց կրակի ծագման դեպքերից, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

**4.8 Համաձայն Կանոնների ապահովագրված են համարվում** կենցաղային կամ արդյունաբերական

նպատակների համար օգտագործվող գազի պայթյունը, գոլորշու կաթսաների պայթյունը, գազապահեստարանների, գազամուղ խողովակների, ճնշման տակ աշխատող անոթների կամ այլ նմանատիպ սարքավորումների, ինչպես նաև պայթուցիկ նյութերի պայթյունը:

4.9 Ռեզերվուարի (կաթսա, խողովակ և այլն) պայթյուն է համարվում միայն այնպիսի պայթյունը, երբ ռեզերվուարի պատերը մասնատվում են այնպես, որ ռեզերվուարի դրսի և ներսի ճնշումը վարկյանաբար հավասարվում է:

4.10 Եթե պայթյունը տեղի է ունենում անոթի ներսում քիմիական փոխակերպումների հետևանքով, ապա անոթին հասցված վնասը հատուցվում է նույնիսկ այն դեպքում, երբ անոթի պատերը չեն մասնատվել կտորների:

**4.11 Ապահովագրված չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ վնասը, որը հասցվել է՝**

- ա) Ապահովադիր, նրա ներկայացուցիչների կամ երրորդ անձանց կողմից թույլատրված գործունեության սահմաններում կատարված պայթյունի հետևանքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ,
- բ) մեքենայական սարքավորումների ներքին այրման խցի ներսում կատարված պայթյունի հետևանքով.
- գ) էլեկտրական կամուտացիոն սարքավորումներին՝ դրանց ներսում գազի ճնշման ուժով.
- դ) արտադրական պրոցեսի սովորական բաղադրիչ մաս կազմող պայթյունների հետևանքով.
- ե) անոթի ներսում ճնշման նվազման հետևանքով (իմպլոզիա).
- զ) հենց ռեզերվուարի պայթյունից, որն առաջացել է մաշվածությունից, ավելորդ (չափազանց) ժանգոտումից, նստվածքներից կամ պատերին առաջացող այլ նստվածքներից.
- է) պայթյունի հետևանքով, եթե տվյալ իրադարձության փաստով համապատասխան քննչական օրգանների կողմից որոշում չի կայացվել քրեական գործի հարուցման մասին, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.12 **Կայծակի հարվածի առաջացրած վնաս** ասելով հասկանում ենք այն վնասը, որը հասցվել է ապահովագրված գույքի վրա կայծակի անմիջականորեն ջերմային կամ էլեկտրադինամիկ ազդեցությունից:

**4.13 Ապահովագրողի կողմից ապահովագրված չեն համարվում և հատուցման ենթակա չեն՝**

- ա) էլեկտրական սարքերին հասցված վնասները, որոնք հետևանք են՝





**ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՂԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

- էլեկտրաէներգիայի ազդեցության կամ լրացուցիչ բեռնվածքի կամ մթնոլորտային պայմանների ուժի արդյունքում ջերմային ներգործության, այնպիսիք, ինչպիսիք են ստատիկ էլեկտրականությունը, մթնոլորտային լիցքաթափման և այլ համանման երևույթների արդյունքում ինդուկցիան,

- էլեկտրաէներգիայի (էլեկտրամագնիսական իմպուլսի) փոխանցման հետևանքով էլեկտրալարերի կայծակնահարությանը,

բ) ցանկացած տեսակի պաշտպանող կանխարգելիչների, պաշտպանող անջատիչների, ամպրոպային պարպիչների, շանթարգելների կամ այլ նմանատիպ սարքավորումների՝ դրանց ընթացիկ օգտագործման ժամանակ:

4.14 Երկրաշարժի հասցրած վնասները ապահովագրությամբ ծածկվում են, եթե երկրաշարժը գրանցված է ապահովագրության տարածքում իրավասու սեյսմոգրաֆիկ ծառայությունների կողմից և երկրաշարժի ուժգնությունը Ռ-իստերի սանդղակով կազմել է 5 (հինգ) բալ և ավելի:

4.15 **Երկրաշարժի հասցրած վնասները ենթակա են հատուցման միայն այն դեպքում**, եթե Ապահովադիրն ապացուցի, որ ապահովագրված շենքերի նախագծման, կառուցման և օգտագործման ժամանակ անհրաժեշտ կարգով հաշվի են առնվել տեղանքի սեյսմոլոգիական պայմանները, որտեղ տեղակայված են տվյալ շենքերը և շինությունները:

4.16 **Փոթորիկի դեպքում** քամու արագությունը պետք է հավաստվի բնապահպանական վիճակի նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների կողմից տրված տեղեկանքով: Եթե այդպիսի տեղեկանք չի կարող տրվել Ապահովադրից անկախ պատճառներով, ապա համարվում է, որ քամին եղել է բավարար արագությամբ, եթե Ապահովադիրն ապացուցի ստորև նշված պայմաններից գոնե մեկի առկայությունը՝

ա) ապահովագրության տարածքում կամ դրա շրջակայքում օդային մասսաների շարժը պատճառ է հանդիսացել լավ վիճակում գտնվող շենքի կամ այլ գույքի, որը կարող է շենքին համանման դիմանալ քամու համապատասխան ուժգնությանը, կործանման կամ վնասման պատճառ:

բ) լավ վիճակում գտնվող ապահովագրված գույքի կործանումը կամ վնասումը կարող էր տեղի ունենալ միայն փոթորիկի ազդեցությամբ:

4.17 **72 ժամ անընդմեջ կամ քնդհատումներով տևած փոթորիկի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:**

4.18 **Կարկուտի հասցրած վնաս ասելով հասկացվում է** ապահովագրված գույքին հասցված վնաս, որն առաջացել է սառցե կտորների անմիջական մեխանիկական ազդեցությամբ:

4.19 **24 ժամ անընդմեջ կամ քնդհատումներով տևած կարկուտի հասցրած վնասները դիտարկվում են որպես մեկ ապահովագրական պատահար:**

4.20 **Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ** այնպիսի շարժական գույքին հասցված վնասը, որը գտնվում է շենքից դուրս, բացի այն գույքից, որը ամրացված է շենքին արտաքին կողմից, (օրինակ՝ ցուցափեղկեր, լյումինեցենտային սարքավորումներ, շերտավարագույրներ և ալեհավաքային սարքավորումներ):

4.21 Չյան և սառցե զանգվածների մեխանիկական ազդեցության հետ միասին ձյան մեծ զանգվածակույտից ապահովագրությունը ծածկում է նաև ձյան մեծ զանգվածակույտն ուղեկցող օդի ճնշման հասցրած վնասը:

4.22 **Ջրհեղեղներից ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն վնասները, որոնք առաջացել են՝**

ա) խոնավության հետևանքով առաջացած բորբոսի (փսման, սնկերի) հետևանքով.

բ) հիմնային ջրերի պատճառով.

գ) կոյուղային ջրերի արտահոսքի հետևանքով, եթե իհարկե դա ջրհեղեղի հետևանք չէ:

4.23 **Համաձայն Կանոնների ապահովագրական պատահար չեն համարվում խորտակումը՝**

ա) որը պայմանավորված է քամիներով՝ առաջացնելով ծովից ալիքների տարածում և ջրի մակարդակի բարձրացում՝ գետի բերած ջուրը գետաբերանում մնալու պատճառով (փոթորկային մակընթացություն),

բ) վերերկրյա ջրամբարներից ջրի դուրս գալու հետևանքով, որը կարելի էր կանխատեսել ելնելով տեղական պայմաններից (տեղանքի ռելիեֆը, կլիման, ջրի սեզոնային տատանումները և այլն), որոնք հատկանշական են ապահովագրության տարածքի համար:

4.24 Համարվում է, որ ջրի ավերից դուրս գալը հնարավոր էր կանխատեսել, եթե վերջին երեսուն տարիներին այդպիսի իրադարձությունները տեղի են ունենում տասը տարիների կտրվածքով միջինում առավել հաճախ, քան մեկ անգամ (Ապահովագրության պայմանագրի գործողության սկզբի ամսաթվի դրությամբ):

4.25 **Սողանքից (փլուզումից) ապահովագրությունը չի ծածկում բնահողը վերականգնելու ծախսերը:**

4.26 **Ապահովագրական ծածկույթը չի տարածվում սողանքից (փլուզումից) առաջացող այն վնասների վրա, որոնք առաջացել են՝**

ա) բնահողի մերձափնյա կամ գետային քայքայումից (երոզիայից),

բ) նոր կառույցների նորմալ նստեցումից,

գ) պայթեցման աշխատանքներ կատարելիս:

4.27 **Ապահովագրական պատահար չեն համարվում և, ըստ այդմ, հատուցում չի տրվում մինչև Ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբը տեղի ունեցած գետնի նստվածքների հետևանքով առաջացած վնասների դիմաց:**

4.28 **Ապահովագրական ծածկույթը չի տարածվում հետևյալ պատճառներով առաջացած գետնի նստվածքի հետևանքով վնասների վրա՝**



- ա) բնահողի սատեցման և հալման հետևանքով,
- բ) բնահողի դինամիկ ներգործության (վիբրացիաի) հետևանքով,
- գ) բնահողի գերչորացման, դրենաժի (ցամաքեցման) հետևանքով,
- դ) բնահողի մերձափնյա և գետային քայքայման (երոզիայի) հետևանքով,
- ե) նոր կառույցների նորմալ նստեցման հետևանքով,
- զ) հիմքային ջրերի ազդեցության հետևանքով:

4.29 **Գրունտային ջրերով ողողման հետևանքով հասցրած վնաս ասելով հասկացվում է** ապահովագրված գույքին կան դրա մասին հասցված վնաս, որը պայմանավորված է բարձրացած գրունտային ջրերի անմիջական ազդեցությամբ:

4.30 **Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ մինչև Ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելը առաջացած գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը:**

4.31 Ապահովագրված գույքի վնասմանը ուղղված երրորդ անձանց անօրինական գործողություններ ասելով հասկացվում է երրորդ անձանց կանխամտածված գործողություններ, ուղղված ապահովագրված գույքի վնասմանը կամ ոչնչացմանը և որոնք օրենսդրության համաձայն կարող են դասակարգվել, որպես՝

- գույքի կանխամտածված ոչնչացում կամ վնասում.
- ավազակություն.
- բարբարոսություն:

4.32 Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա պահովագրական պատահար չի համարվում ապահովագրված գույքի ոչնչացումն ու վնասումը, որը հետևանք է հանդիսանում այն գործողությունների, որոնք իրավասու պետական մարմինների կողմից դասակարգված են վերը թվարկվածներից այլ կերպ:

4.33 **«Կոտրանքի միջոցով կողոպուտ» ռիսկի համար** ապահովագրությունը տարածվում է միայն ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների և պահեստարանների ներսում գտնվող գույքի վրա:

4.34 Կոտրանքի միջոցով կողոպուտը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստով քննչական մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:

4.35 **«Կողոպուտ կամ Ավազակություն» ռիսկի համար** ապահովագրությունը տարածվում է միայն ապահովագրության տարածքում տեղակայված շինությունների և պահեստարանների ներսում գտնվող գույքի վրա, ինչպես նաև ապահովագրության տարածքում տեղակայված հսկվող ցանկապատված տարածքներում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.36 **Կողոպուտ կամ Ավազակություն ասելով հասկացվում է** հարձակում ուրիշի գույքը հափշտակելու նպատակով, որն իրականացվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր ուժի կիրառմամբ կամ այդպիսի ուժի կիրառման սպառնալիքով:

4.37 Կողոպուտը կամ Ավազակությունը համարվում է տեղի ունեցած, եթե՝

ա) Ապահովադրի կամ իր ներկայացուցիչների նկատմամբ նրանց դիմադրությունը կոտրելու և ապահովագրված գույքը բռնագրավելու նպատակով կիրառվում է բռնություն.

բ) Ապահովադիրը կամ նրա ներկայացուցիչները իրենց կյանքին կամ առողջությանը վնաս սպառնալու վտանգի տակ, որը կարող է իրականացվել տեղում, փոխանցում են կամ թույլ են տալիս փոխանցել գույքը ապահովագրության տարածքի շրջանակներում կամ ապահովագրության տարածքին հարող ցանկապատված տարածքի սահմաններում: Կանոնների սույն կետի շրջանակներում Ապահովադրի աշխատողներին են վերաբերում նաև շենքի, ներքին տարածությունների և ապահովագրված տարածքում գտնվող գույքի պահպանության համար անձինք՝ վարձված Ապահովագրողի կողմից:

4.38 Կողոպուտը կամ Ավազակությունը համարվում է տեղի ունեցած միայն այն դեպքում, եթե տվյալ իրադարձության փաստի առիթով քննչական մարմինների կողմից օրենսդրությամբ նախատեսված կարգով կայացվել է հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին որոշում:

4.39 **Մոնտաժման սխալներ ասելով հասկացվում է** չկանխամտածված գործողություններ, որոնք տեղի են ունեցել շինմոնտաժային աշխատանքներ իրականացնելիս, այն աձանց կողմից, որոնք պատասխանատու չեն այն աշխատանքների կատարման համար, որոնք հանգեցրել են ապահովագրված գույքի վնասմանը/կործանմանը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.40 **Ինժեներական համակարգերի (ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման) վթար ասելով հասկացվում է** վնասներ, որոնք արդյունք են ապահովագրված գույքին այն ջրերի անմիջական ներգործության հետևանքով հասցված վնասների, որոնք անապասելի և հանակարծակի դուրս են եկել ջրամատակարարման, կոյուղու կամ ջեռուցման համակարգերից, դրանց հետ ստացիոնար կերպով կապակցված սարքից կամ սարքավորումից, ինչպիսին է ծորակը, կափույրը, բաքը, վաննան, ռադիատորը, ջեռուցիչ կաթսան և այլն:

4.41 **Ապահովագրական պատահարներ չեն համարվում և հատուցման ենթակա չեն** այն վնասները որոնք առաջացել են կոյուղուց ցանկացած պատճառով ջրի դուրս գալու հետ, որը տարբերվում է կոյուղու խողովակի պայթյունից, կապերից, միացումներից, հրդեհի հանգցման ցայտաջրմուղային համակարգերի կամ ջրաքաշ խողովակներից ջրի դուրս գալուց, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:





4.42 Ապահովագրողը ապահովագրական պատահարից հետո տարածքի մաքրման ծախսերը հատուցում է միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է Ապահովագրության պայմանագրով՝ պայմանագրով նախատեսված սահմանաչափերով:

4.43 **Սարքման ծախսեր են համարվում այն ծախսերը**, որոնք պետք է իրականացվեն ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո՝ շինհրապարակի տարածքը վերականգնողական աշխատանքների համար պիտանի վիճակի բերելու համար:

4.44 Տեղի ունեցած իրադարձության փաստով քրեական գործ հարուցելու պահանջը պարտադիր չէ միայն այն դեպքում, եթե քննչական մարմինները հրաժարվել են քրեական գործ հարուցելուց՝ ՀՀ Քրեական Օրենսգրքին համապատասխան:

**4.45 Ապահովագրողը չի հատուցում՝**

ա) *Ապահովագրության պայմանագրում նշված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով վնասը.*

բ) *Ցանկացած բնույթի անուղղակի վնասը, ներառյալ տույժը (տուգանքը), Ապահովադրի մոտ առաջացած վնասը, որը հետևանք է շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրի պայմանների խախտման կամ այդ պայմանագրի դադարեցման.*

գ) *Վնասը, որը հետևանք է սխալ նախագծման, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

դ) *Վնասը, որը չնայած առաջացել է ապահովագրական դեպքի արդյունքում, բայց հայտնաբերվել է գույքագրման ընթացքում:*

ե) *Վնասը, որը պատճառվել է ապահովագրական ծածկույթը ընդգրկող տարածքին անմիջապես մոտ գտնվող առարկաներից, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

զ) *Վնասը, որն առաջացել է թերություններ (դեֆեկտներ) ունեցող նյութերի կամ կոնստրուկցիաների փոխարինման, վերանորոգման կամ հեռացման (վերացման) արդյունքում, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: **Սակայն, եթե թերություն (դեֆեկտ) ունեցող նյութերի օգտագործման արդյունքում տուժել են ապահովագրված գույքի սարքին վիճակում գտնվող այլ մասերը, ապա դրանց վերականգնման ծախսերը ենթակա են հատուցման.***

է) *Վնասը, որն առաջացել է՝*

- *մաշվածության, կորոզիայի, թթվեցման, ինչպես նաև սովորական եղանակային պայմանների ազդեցության (ներգործության) հետևանքով.*
- *շինհրապարակում գտնվող սարքավորումների շահագործման գործընթացում ծագած կամ դրանց անսարքության արդյունքում առաջացած մեքենաների և/կամ էլեկտրական սարքավորումների ներքին անսարքությունների հետևանքով.*
- *ընդհանուր օգտագործման ճանապարհներին տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ դրանց կործանման, կորստի կամ վնասման.*
- *տեխնիկական, շինարարական, հաշվապահական և այլ փաստաթղթերի, դրամի, արժեթղթերի կամ չեկերի, փաթեթավորման նյութերի, այդ թվում կոնտեյներների, արկղերի, տակառների և այլնի վնասման կամ կործանման:*

**4.46 Հատուցման ենթակա չէ այն վնասը, որը հետևանք է.**

4.45.1 *Ցանկացած ռազմական գործողությունների և նրանց հետևանքների, քաղաքացիական պատերազմների, ժողովրդական հուզումների, գործադուլների, աշխատանքի ընդհատումների, առգրավումներից, քաղաքացիական կամ զինվորական իշխանությունների կամ ցանկացած քաղաքական կազմակերպության հրամանով գույքի ձերբակալումների, ոչնչացման կամ վնասման, հարկադրաբար ազգայնացման, արտակարգ կամ հատուկ դրության կիրառելու, ընդվզումների, լոկաուտների, պետական հեղաշրջման, դավադրության, սպտամբությունների, հեղափոխության, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

4.45.2 *Տարերային աղետների, երբ մինչև Ապահովագրության պայմանագրի կնքումը ապահովագրական ծածկույթը ընդգրկող տարածքը հայտարարվել է որպես տարերային աղետի գոտի.*

4.45.3 *Ցակացած տիպի ռադիոակտիվ էներգիայի ազդեցության.*

4.45.4 *Ապահովադրի, նրա աշխատակիցների կամ ներկայացուցիչների միտումնավոր գործողությունների.*

4.45.5 *Աշխատանքների լրիվ կամ մասնակի դադարեցման ընթացքում ապահովագրված գույքի վնասումը կամ կործանումը, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: «Աշխատանքների մասնակի դադարեցման ժամանակաշրջանին» չեն վերաբերվում հանգստյան և տոնական օրերը: Աշխատանքների դադարեցման օր է համարվում «Աշխատանքների դադարեցման մասին ակտ»-ի ստորագրման օրը: Աշխատանքների դադարեցման մասին Ապահովադիրը պարտավոր է գրավոր տեղեկացնել Ապահովագրողին Ակտի ստորագրման հաջորդ աշխատանքային օրը:*

4.45.6 *Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ շինմոնտաժային աշխատանքների համար պատասխանատու անձանց կողմից ապահովագրված օբյեկտի պահպանման, շահագործման, սպասարկման կանոնների չպահպանման (այդ թվում. շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ օգտագործվող նյութերի և կոնստրուկցիաների պահպանման, շահագործման, սպասարկման կանոնների չկատարման), ինչպես նաև նյութերի օգտագործման՝ դրանց համար նախատեսված նպատակները տարբեր այլ նպատակների համար:*



4.45.7 Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացնող այլ կազմակերպության կողմից շինարարական նորմերի և կանոնների, ինչպես նաև ապահովագրված օբյեկտների վրա աշխատանքներ իրականացնելիս տեխնիկական անվտանգության կանոնների չկատարման:

4.45.8 Միավների, որոնք թույլ են տրվել շինարարական օբյեկտի նախագծման ժամանակ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.45.9 Դեֆեկտավոր նյութերի և կոնստրուկցիաների օգտագործման, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Բայց եթե դեֆեկտավոր նյութերի օգտագործման ժամանակ տուժել են ապահովագրված գույքի սարքին վիճակում գտնվող մասերը, ապա դրանց վերականգնման համար ծախսերը ենթակա են հատուցման:

4.45.10 Փորձարարական կամ հետազոտական աշխատանքների, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.45.11 Վնասի, որն անմիջապես հետևանք է շահագործման գործոնների մշտական ազդեցության (մաշվածության, կոռոզիայի, թթվելու, փտման, ինքնաբռնկման):

4.45.12 Ապահովադրի, նրա ներկայացուցիչների կամ Ապահովագրության պայմանագրում նշված շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող այլ անձանց կողմից լիցենզիայի շրջանակներում թույլատրված գործողություններից բացի այլ գործողությունների իրականացման:

4.45.13 Շինարարական աշխատանքներին այնպիսի անձանց մասնակցության թույլտվության, որոնք չունեն օրենքով սահմանված մակարդակին համապատասխան պահանջվող որակավորում և աշխատանքներ կատարելու համար փաստաթղթով ձևակերպված թույլտվություն:

4.45.14 Շինարարական աշխատանքների իրականացման համար այնպիսի մեքենաների, սարքավորումների և շինարարական նյութերի օգտագործման, որոնք չեն համապատասխանում շինարարական նորմերի և կանոնների պահանջներին:

4.45.15 Ապահովադրին, նրա ներկայացուցիչներին կամ շինմոնտաժային աշխատանքների իրականացնող այլ կազմակերպության աշխատակիցներին պատճառված մարմնական վնասվածքների, հիվանդության կամ մահվան, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.45.16 Նախագծերի, գծագրերի, լուսանկարների, նմուշների, մակետների, արժեթղթերի, կանխիկ դրամի, հաշվապահական և այլ փաստաթղթերի կործանման, վերացման, կորստի, վնասման:

4.45.17 Վնասվածքների, որոնք գոյություն ունեն Ապահովագրության պայմանագրի կնքման պահին և հայտնի էին Ապահովադրին, Շահառուին կամ նրանց ներկայացուցիչներին, բայց դրանց մասին չէր հայտնվել Ապահովագրողին:

4.45.18 Ահաբեկչության, գերեվարման կամ դիվերսիայի, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

**4.47 Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման մերժելու հիմք են հանդիսանում՝**

ա) Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի կողմից պատահարի առաջացմանն ուղղված կանխամտածված անօրինական գործունեությունը, որը որակվում է որպես այդպիսին դատարանի կամ քննչական մարմինների փաստաթղթերի համաձայն:

բ) Ապահովադրի կողմից ապահովագրության օբյեկտի վերաբերյալ դիտավորյալ ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելը, ապահովագրված գույքի զննմանը խոչընդոտելը, ապահովագրական պատահարի առաջացման հանգամանքների հայտնաբերմանը, վնասի բնույթի և չափի որոշմանը, բացառությամբ այն դեպքերի, որոնք էական նշանակություն չեն ունեցել ապահովագրական ռիսկի գնահատման համար:

գ) Ապահովադրի (Շահառուի) կողմից սույն Կանոններով սահմանված պարտավորությունների չկատարումը (ոչ պատշաճ կատարումը):

դ) Պատճառված վնասի համար պատասխանատու անձի կողմից անհրաժեշտ համապատասխան գումարի վճարումը: Եթե Ապահովադրիրը պատճառված վնասի համար պատասխանատու անձի կողմից ստացել է հատուցում, ապա Ապահովագրողը ապահովագրական հատուցում հաշվարկելիս որպես վնաս ընդունում է միայն Ապահովագրության պայմանագրի համաձայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացված գումարի տարբերության չափը: Այդպիսի գումարներ ստանալու դեպքում Ապահովադրիրը պարտավոր է դրանց մասին անմիջապես տեղյակ պահել Ապահովագրողին:

ե) օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերը:

**4.48 Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն նաև՝**

4.48.1 Ապահովագրողին ներկայացված պահանջները հատուցելու տույժերը (տուգանքները), որոնք հետևանք են շինմոնտաժային աշխատանքների (մատուցված ծառայությունների) անորակ կամ ոչ ժամանակին կատարման, պայմանագրի չկատարման կամ դադարեցման:

4.48.2 Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովադրի չստացված շահույթը (բաց թողնված շահույթը):

4.48.3 Վնասը, որն առաջացել է ապահովագրական պատահարի հետևանքով, բայց հայտնաբերվել է միայն զննման արդյունքում:

4.48.4 Ապահովագրության տարածքին անմիջապես մոտ գտնվող օբյեկտին հասցված վնասը (բացառությամբ շինհրապարակում կամ նրան անմիջապես մոտ գտնվող օբյեկտների, որոնք պատկանում են Պատվիրատուին կամ Կապալառուին, ինչը հաստատված է կապալի պայմանագրով):



4.48.5 Վնասը, որն առաջացել է շինարարական նորմերով և կանոններով չնախատեսված վիբրացիայի (թրթռման) կամ հիմքի հեռացման կամ թուլացման հետևանքով, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

4.48.6 Վնասը, որը չի գերազանցում Ապահովագրության պայմանագրում նշված ոչ պայմանական ֆրանշիզայի չափը:

4.48.7 Վնասը, որը պայմանավորված է Ապահովադրի կամ նրա ներկայացուցիչների կողմից վնասի կանխարգելմանն ուղղված Ապահովագրողի գրավոր ցուցումների չկատարմամբ:

**ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ**

5.1 Ապահովագրության տարածքը նշվում է Պայմանագրում:

5.2 Գույքը ապահովագրված է համարվում միայն ապահովագրության տարածքում: Եթե ապահովագրված գույքը տեղափոխվում է ապահովագրության տարածքից դուրս, ապա Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունը կապված այդ գույքի հետ դադարում է:

5.3 Ապահովագրության տարածքի փոփոխության դեպքում Ապահովադիրը պարտավոր է այդ փոփոխությունները գրավոր կերպով համաձայնեցնել Ապահովագրողի հետ:

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՍԱՐ**

6.1 Ապահովագրական գումարը Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ որոշված դրամական արտահայտությամբ գումար է, որի սահմաններում Ապահովագրողը, ապահովագրական դեպք տեղի ունենալիս, պարտավորվում է վճարել Ապահովադրին ապահովագրական հատուցում և որից ելնելով սահմանվում է ապահովագրավճարի չափը:

6.2 Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Ապահովադրի դիմումի հիման վրա՝ ապահովագրական օբյեկտի ապահովագրական (իրական) արժեքի սահմաններում

6.3 Պայմանագրով կարող է սահմանվել առավելագույն պատասխանատվության չափ (ապահովագրական գումար)՝

ա) շինմոնտաժային աշխատանքների համար օգտագործվող գույքի կամ սարքավորումների ապահովագրության համար,

բ) աշխատողների դժբախտ պատահարներից ապահովագրության համար,

գ) երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրության համար,

դ) թողարկումից հետո երաշխիքային պարտավորությունների ապահովագրության համար:

6.4 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

6.5 Օբյեկտի ապահովագրական (իրական) արժեքից ցածր ապահովագրական գումարի սահմանման դեպքում գործում է մասնակի ապահովագրություն, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.6 **Եթե դա ուղղակիորեն նշված է Ապահովագրության պայմանագրում, ապա ապահովագրության օբյեկտը կարող է ապահովագրվել «առաջին ռիսկի» պայմանով:** Այդ դեպքում ապահովագրված գույքի նկատմամբ ապահովագրական հատուցման գումարի որոշման ժամանակ հաշվի չի առնվում ապահովագրական գումարի հարաբերությունը ապահովագրական արժեքին:

6.7 Ապահովագրության պայմանագրում Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ սահմանվում է Ապահովագրողի պատասխանատվության սահմանը մեկ ապահովագրական դեպքի և/կամ ապահովագրության գործողության ամբողջ ընթացքի համար և ոչ պայմանական չհատուցվող գումարը (այսուհետ՝ ֆրանշիզա):

6.8 Եթե Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողը կատարել է ապահովագրական հատուցում, ապա ապահովագրական գումարը նվազեցվում է կատարված հատուցման չափով: Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին ապահովագրական գումարի նախկին չափը վերականգնելու պահանջով, որն իրականացվում է լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ԶՎՃԱՐԵԼՈՒ ՀՏՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

7.1 Ապահովագրավճարն ապահովագրության համար նախատեսված գումար է, որն Ապահովադիրը Պայմանագրի համաձայն պարտավոր է մուծել Ապահովագրողին:

7.2 Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով ապահովագրական սակագնից (ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ), որը սահմանվում է ելնելով ապահովագրական օբյեկտի (ապահովագրական ռիսկի) բնութագրերից և այլ գործոններից, որոնք կարող են ազդել ապահովագրական պատահարի առաջացման և վնասի չափի մեծության վրա:

7.3 Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է կանխիկ կերպով կամ անկանխիկ հաշվարկների միջոցով՝ Ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան:

7.4 Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից կարող է մուծվել միանվագ կամ մաս-մաս՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

7.5 Ապահովագրավճարի վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:



7.6 Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվին կամ դրամարկղ դրամական միջոցների մուտքագրման օրը:

7.7 Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 14-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում միանվագ կամ առաջին հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով նախատեսված չէ այլ ժամկետ կամ ապահովագրավճարի մուծման տարածամկետման հնարավորություն:

7.8 Եթե Ապահովադիրը Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում չի վճարել հերթական ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրավճարի վճարման համար սահմանված ժամկետից երեք օր (յրացուցիչ ժամկետ) հետո միակողմանի լուծելու Պայմանագիրը՝ առանց այդ մասին ապահովադիրին ծանուցելու:

**ԲԱԺԻՆ 8. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻՉԱ)**

8.1 Պայմանագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ապահովադիրի մասնակցության չափ վնասի հատուցմանը), որն Ապահովագրողի և Ապահովադիրի միջև համաձայնեցված գումար է կամ սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

8.2 Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

8.3 Պայմանագրում Պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցման պատասխանատվությունից, երբ ապահովագրական հատուցման գումարը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, երբ ապահովագրական հատուցման գումարը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

8.4 Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողը չհատուցվող գումարի չափով ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց:

**ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

9.1 Ապահովագրության պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադիրի միջև գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման ժամանակ իրականացնել ապահովագրական հատուցում Ապահովադիրին կամ այն անձին, որի օգտին կնքվել է Ապահովագրության պայմանագիրը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Ապահովագրության պայմանագրում սահմանված ժամկետներում կատարել ապահովագրավճարի վճարում: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել նաև Կողմերի համաձայնությամբ սահմանվող և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր գործարքի պայմաններին համապատասխանող այլ պայմաններ:

9.2 Կանոնների հիման վրա Ապահովագրության պայմանագիր կնքելիս սույն Կանոնները դառնում են Ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը, որը պարտադիր է Ապահովագրողի և Ապահովադիրի համար: Ապահովադիրը կարող է պայմանավորվել Ապահովագրողի հետ Ապահովագրության պայմանագրում Կանոնների առանձին պայմանների բացառման, ինչպես նաև Կանոններում պարունակվող պայմաններից տարբեր այլ պայմանների ներառման մասին:

9.3 Ապահովագրության պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը Ապահովագրողին է ներկայացնում իր կողմից ստորագրված սահմանված կարգի դիմում, որտեղ վերջինս պարտավոր է նշել ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ ապահովագրական օբյեկտի վերաբերյալ, ինչպես նաև Ապահովագրողի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն՝ ապահովագրական ռիսկի աստիճանի գնահատման, ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և այդ պատահարի հետևանքով հնարավոր վնասների չափերի որոշման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների մասին: Այդ տվյալները Ապահովագրողի կողմից ընդունվում են որպես հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն ռիսկի աստիճանի գնահատման և ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության որոշման համար:

9.4 Եթե Ապահովագրության պայմանագրի կնքումից հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին նախապես հայտնել է **Կանոնների 9.3 կետով** նախատեսված կեղծ տեղեկություններ, ապա Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրության պայմանագիրը համարել անվավեր և կիրառել օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված հետևանքները:

9.5 Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրի կողմից Ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի կորստի դեպքում Ապահովագրողն Ապահովադիրին տալիս է կրկնօրինակ: Կրկնօրինակի հանձնումից հետո Ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի կորցրած օրինակը համարվում է անվավեր և դրանով վճարումներ չեն կատարվում:

9.6 Պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում: Սակայն եթե Պայմանագրում գործողության ժամկետ նշված չէ, ապա Կանոնների համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում՝

ա) ապահովագրավճարը կանխիկ վճարելու դեպքում՝ Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի կամ դրա մի մասի ստացման օրը:



բ) ապահովագրավճարը անկանխիկ կերպով վճարելու դեպքում Ապահովագրողի հաշվին փոխանցված վճարը մուտք լինելու հաջորդ օրվանից:

9.7 Պայմանագրով ապահովագրության ժամկետը սովորաբար սահմանվում է մինչև մեկ տարի տևողությամբ: Ապահովադիրը և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ Պայմանագրում ապահովագրության այլ ժամկետ սահմանելու համար:

9.8 Ապահովագրողը պատասխանատվություն է կրում այն ապահովագրական պատահարների համար, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:

9.9 **Կանոնների 9.6 կետի համաձայն** ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման դեպքում ապահովագրությունը սկսում է գործել անմիջապես աշխատանքները սկսելուց կամ շինհրապարակ ապահովագրության օբյեկտների բեռնաթափումից հետո, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.10 Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության գործողությունը դադարում է այն ապահովագրված օբյեկտների կամ դրանց մասերի համար, որոնք ընդունված են կամ բաց են թողնվել շահագործման՝ ավարտված շինարարական օբյեկտի ընդունման կամ հանձնման-ընդունման Ակտի ստորագրման օրվանից, ինչպես նաև այն համապատասխան սարքավորման մասի կամ մեքենայի, եթե այդ սարքավորման մասը կամ մեքենաներից մեկը կամ մի քանի մեքենաներ ենթարկվում են փորձարկման, հանձնվում են շահագործման, որը նույնպես պետք է փաստացի հաստատված լինի, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.11 Ապահովագրողի ներկայացուցիչը կարող է մասնակցել ավարտված շինարարական օբյեկտների շահագործման հանձնման հանձնաժողովի աշխատանքներին:

9.12 Եթե աշխատանքների արագ տեմպերի արդյունքում ապահովագրության ժամկետը ավարտվում է ավելի շուտ, քան նշված էր Ապահովագրության պայմանագրում, ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

9.13 Պայմանագրի փոփոխումը իրականացվում է Ապահովադրի և Ապահովագրողի երկկողմ համաձայնությամբ Պայմանագրի կողմերից մեկի գրավոր դիմումի հիման վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով, կանոններով կամ Պայմանագրով:

9.14 Պայմանագրի փոփոխումն իրականացվում է Պայմանագրի կողմերից մեկի դիմումի ստացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պայմանագրով այլ ժամկետ նախատեսված չէ:

9.15 Պայմանագրի կողմի դիմումի ստացման պահից մինչև համապատասխան որոշման ընդունման պահը Պայմանագիրը գործում է նախկին պայմանների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

9.16 Պայմանագրի բոլոր փոփոխություններն իրականացվում են գրավոր ձևով:

**ԲԱԺԻՆ 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

10.1 Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է՝

ա) Ապահովադրի, եթե այն իրավաբանական անձ է՝ լուծարման, իսկ եթե ֆիզիկական անձ է՝ մահվան դեպքում:

բ) Պայմանագրից Ապահովադրի (Շահառուի) վաղաժամկետ հրաժարվելու դեպքում:

գ) Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորություններն Ապահովագրողի կողմից կատարելու դեպքում:

դ) օրենքով, այլ իրավական ակտերով, կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

10.2 Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն ամբողջությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրը չի կատարում **Կանոնների 12.1 կետով** սահմանված իր պարտականությունները:

10.3 Պայմանագիրը կարող է Ապահովագրողի պահանջով վաղաժամկետ լուծվել՝ Ապահովադրի կողմից օրենքով, այլ իրավական ակտերով, կանոններով կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում, որի ժամանակ Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարը՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ ապահովագրավճարի հաշվարկման համար որպես հիմք ընդունվում է Պայմանագրի համաձայն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի 50 (հիսուն) տոկոսը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.4 Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրն՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

10.5 Ապահովադրի (Շահառուի) կողմից Պայմանագրից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում՝ վերջինիս վերադարձվում են Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը՝ մասնահանելով ապահովագրավճարի 30 (երեսուն) տոկոսի չափով գործավարման ծախսեր, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.6 Այն դեպքում, երբ Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.7 Ապահովագրողի լուծարման դեպքում, վերջինս պարտավոր է Ապահովադրին վերադարձնել Պայմանագրի չլրացած ժամկետի համար մուծված ապահովագրավճարը:





10.8 Պայմանագիրն առոչինչ կամ անվավեր է համարվում օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**11.1. Ապահովագրողը պարտավոր է՝**

11.1.1 Ապահովադրի պահանջով օրենքով, այլ իրավական ակտերով և Կանոններով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե դրա գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական օբյեկտի արժեքի կամ ապահովագրական ռիսկի փոփոխություն.

11.1.2 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում ապահովագրական հատուցում վճարել Ապահովադրին.

11.1.3 Ապահովագրական գումարի և պատճառված վնասի մեծության սահմաններում հատուցել Ապահովադրի այն ծախսերը, որոնք ողջամտության սահմաններում կատարվել են ապահովագրական պատահարի ընթացքում վնասների կանխման կամ նվազեցման նպատակով կամ Ապահովագրողի ցուցումներին համապատասխան.

11.1.4 Չհրապարակել կամ այլ կերպ չտարածել Ապահովադրի անձնական շահերի, գույքային դրության և առևտրային կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները.

11.1.5 Կատարել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

**11.2. Ապահովագրողն իրավունք ունի՝**

11.2.1 Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերի կամ ապահովագրական գործակալի միջոցով.

11.2.2 Ապահովագրական ռիսկի գնահատման նպատակով ուսումնասիրել ապահովագրության օբյեկտը, անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն՝ դրա իրական արժեքը պարզելու նպատակով.

11.2.3 Ձննել և ուսումնասիրել պատահարի հետևանքով վնասված գույքը, փորձաքննություն կատարել վնասի առաջացման պատճառների և հետևանքների բացահայտման ուղղությամբ.

11.2.4 Մասնակցել ապահովագրված գույքի փրկման և պահպանման աշխատանքներին, տալ Ապահովադրի համար պարտադիր գրավոր ցուցումներ՝ ուղղված վնասի նվազեցմանը.

11.2.5 Հարցումով դիմել համապատասխան լիազոր (իրավասու) մարմիններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառները հաստատող փաստաթղթեր կամ այլ տեղեկությունները ստանալու նպատակով.

11.2.6 Ձննել վնասված գույքը՝ չսպասելով Ապահովադրի կողմից վնասի ծանուցմանը: Ապահովադրին իրավունք չունի դրանում խոչընդոտել Ապահովագրողին.

11.2.7 Ապահովագրական պատահարի փաստի սահմանման և վնասի չափի գնահատման համար պահանջել Ապահովադրից ներկայացնել անհրաժեշտ բոլոր տեղեկությունները՝ ներառյալ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկությունները.

11.2.8 Ապահովագրված գույքի վնասման կամ կործանման դեպքում երկարաձգել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե՝

ա) Ապահովադրի նախաձեռնությամբ նշանակված է լրացուցիչ փորձաքննություն՝ ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների չափը ճշտելու նպատակով.

բ) Ապահովադրի աշխատակիցների կամ նրա ներկայացուցիչների նկատմամբ ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստով հարուցվել է քրեական գործ.

գ) Կան հիմնավորված կասկածներ Ապահովադրի ապահովագրական հատուցումը ստանալու իրավասության վերաբերյալ:

11.2.9 Ավելացնել ապահովագրավճարի չափը կամ դադարեցնել Պայմանագիրը, եթե Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի մեծացում.

11.2.10 Պայմանագրում նախատեսել հատուցման վճարման բնաիրային ձև.

11.2.11 Իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

**ԲԱԺԻՆ 12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**12.1. Ապահովադրի պարտավոր է՝**

12.1.1 Պայմանագրում ՆՇՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՍՈՒԾԵԼ ապահովագրավճարը.

12.1.2 Պայմանագրի կնքման ժամանակ և դրանից հետո Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ էական նշանակություն ունեցող՝ իրեն հայտնի ԲՈԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, մասնավորապես.

ա) շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության (կապալառու, ենթակապալառու) փոփոխում.

բ) շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամկետների փոփոխում.

գ) օբյեկտի պահպանման պայմանների, ինչպես նաև ապահովագրված գույքի նկատմամբ անվտանգության և պաշտպանության այլ միջոցների փոփոխություն.



**ՇԻՆՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

դ) շինմոնտաժային աշխատանքներ իրականացնող կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցում,  
ե) նախատեսված նախագծի, ինչպես նաև շինարարական նորմերի և կանոնների համեմատությամբ  
աշխատանքային տեխնոլոգիաների փոփոխում.

զ) վերանախագծում:

12.1.3 Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ ապահովագրական օբյեկտի գծով առկա այլ ապահովագրության  
պայմանագրերի մասին.

12.1.4 ՊԱՀՊԱՆԵԼ ապահովագրական օբյեկտի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված  
անվտանգության նորմերն ու կանոններն ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ինչպես նաև  
շինմոնտաժային աշխատանքներն ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ նախագծին և նախագծման ու շինարարության գործող  
նորմատիվային փաստաթղթերի պահանջներին խիստ համապատասխան կարգով.

12.1.5 ՀԵՏԵՎԵԼ ապահովագրված գույքի շահագործման և ծառայության վերաբերյալ հրահանգներին,  
ինչպես նաև ՕԳՏԱԳՈՐԾԵԼ այդ ունեցվածքը բուն նշանակությամբ.

12.1.6 ՉԽՈՉԸՆԳՈՏԵԼ Ապահովագրողի ներկայացուցչին Պայմանագրի գործողության ժամկետի  
ընթացքում ապահովագրված ունեցվածքի ՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՄԱՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ նրա կողմից  
հայտնաբերված վնասի կամ կորուստի հավանական աղբյուր հանդիսացող շինարարական կամ շահագործողական  
թերությունների վերացման ուղղությամբ նրա կարգադրությունները:

12.1.7 Պատահարի առաջացման դեպքում ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԵՌՆԱՐԿԵԼ վնասի կանխման կամ  
նվազեցման ուղղությամբ.

12.1.8 Պայմանագրով ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ պատահարի տեղի ունենալու մասին  
(այդ թվում՝ գրավոր) տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողին Ապահովագրողին չի հայտնել պատահարի  
մասին սույն ենթակետում նշված կարգով, ապա Ապահովագրողը Հայաստանի Հանրապետության  
քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ  
ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական  
պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը  
չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա.

12.1.9 Անհրաժեշտության դեպքում պատահարի մասին ԱՆՄԻՋԱՊԵՍ հայտնել համապատասխան  
լիազորված մարմնին (ՀՀ ոստիկանություն, հրշեջ ծառայություն, պետական համապատասխան վթարային  
ծառայություն և այլն) և ստանալ գրավոր տեղեկանք.

12.1.10 Չսպասելով Ապահովագրողի ներկայացուցչի, ոստիկանության աշխատակիցների և այլ իրավասու  
մարմինների ներկայացուցիչների դեպքի վայր մեկնելուն՝ ՀԱՎԱՔԵԼ ապահովագրական դեպքի պատճառների և  
հանգամանքների վերաբերյալ հասանելի ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (օրինակ՝ ականատեսների  
(վկաների) մասնակցությամբ կամայական ձևի ակտ կազմելու, հնարավորության դեպքում վնասի նկարագիրը  
լուսանկարի կամ տեսանկարահանման օգնությամբ տալու միջոցով) ԵՎ ՓՈԽԱՆՑԵԼ Ապահովագրողին.

12.1.11 ՊԱՀՊԱՆԵԼ վնասված օբյեկտը անփոփոխ վիճակում՝ մինչև Ապահովագրողի ներկայացուցիչների  
զննումը: Ապահովագրողին իրավունք ունի փոխել վնասի պատկերը, եթե դա թելադրված է անվտանգության  
կանոններով (նվազեցնելով վնասի չափերը), ինչպես նաև Ապահովագրողին գրավոր հայտնելու պահից 7 օրը  
լրանալուց հետո.

12.1.12 Ապահովագրողին ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ապահովագրական հատուցման համար սահմանված կարգի  
գրավոր դիմում՝ նշելով դիմումի տրման պահին ապահովագրական դեպքի վերաբերյալ իրեն հայտնի բոլոր  
տեղեկությունները և ապահովագրական դեպք տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը, այդ թվում  
ներկայացնել՝

ա) հրդեհի հետևանքով վնասների առաջացման դեպքում, որն առաջացել է ապահովագրված ռիսկերից  
ցանկացածի հետևանքով՝

- հրդեհի փաստով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին  
տեղեկանք,
- պետական հրշեջ ծառայության եզրակացություն:

բ) տարերային աղետների, ինչպես նաև կայծակնահարության հետևանքով վնասների առաջացման դեպքում՝

- տեղեկանք օդերևութաբանական ծառայությունից բնության իրադարձությունների նկարագրությամբ դեպքի  
տեղի ունենալու (որոնց հետևանք են ապահովագրված գույքի վնասումը և (կամ) կործանումը) վայրի և այդ  
իրադարձության տեղի ունենալու ամսաթվի վերաբերյալ (փոթորիկի դեպքում տեղեկանքը պետք է պարունակի  
տվյալներ քամու միջին արագության մասին):

գ) ջրամատակարարման, ջրուղման, կոյուղու և նման համակարգերից, ցայտաջրմուղային և ջրաքաշ  
համակարգերից ջրի հասցրած վնասների դեպքում՝

- ջրամատակարարման և այլ նմանատիպ ցանցեր շահագործող մասնագիտացված ծառայությունների  
կողմից տրված ակտ, որը բնութագրում է տվյալ համակարգերի շարքից դուրս գալու պատճառները և մեղավոր կողմին,  
- տեղեկանք բնակչահագործման վարչության (կամ այլ նման կազմակերպության) կողմից այն դեպքում, եթե  
շենքը բնակելի է և հանձնված է շահագործման,

դ) պայթյունի հետևանքով վնասների դեպքում՝



- Լեռնային տեխնոլոգիայի կամ ուժային ազդեցությունների (գազատար ցանցերի) պայմանների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ պետական ծառայություններից տեղեկանքներ կամ ակտեր վնասի պատճառների մասին՝ նշելով տեխնիկական դեֆեկտները, շահագործման նորմաների խախտման մեջ մեղավոր անձանց,

**ե) կոտրելու միջոցով կողոպուտի, գողության, ավազակության ժամանակ կամ երրորդ անձանց կանխամտածված գործողությունների ժամանակ՝**

- տեղի ունեցածի մասին ներքին գործերի մարմիններ ներկայացված Ապահովադրի դիմումի պատճենը՝ պահանջով անցկացնել հետաքննություն կամ հարուցել քրեական գործ.

- քրեական գործի հարուցման (կամ դրա հարուցումը մերժելու) մասին որոշման պատճենը.

- ապահովագրված շինությունների և այլ գույքի կողմնակի կազմակերպության ուժերով պահպանություն իրականացնելու դեպքում՝ պահպանություն իրականացնող ընկերության կամ արտագերատեսչական պահպանություն իրականացնողների հետ կնքված պայմանագրի պատճենը.

- պահպանության ազդանշանային համակարգի առկայության դեպքում՝ ազդանշանային համակարգի աշխատելու վերաբերյալ փաստաթղթերը, վտանգի ազդանշանը պահպանող ձեռնարկության վահանակի վրա ստացման կամ արտագերատեսչական պահպանության և օպերատիվ խմբի մեկնումը հաստատող փաստաթղթերը,

**զ) մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ թույլ տրված սխալների շինարարական/մոնտաժային օբյեկտի փլուզման կամ վնասման հետևանքով առաջացած վնասների դեպքում՝**

- պետշինհսկողության եզրակացությունը.

- շինմոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակ փլուզման կամ սխալի փաստով անկախ փորձաքննության եզրակացությունը,

12.1.13 ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼ կրած վնասների գումարների չափը հաստատող և հիմնավորող փաստաթղթեր, որոնց հիման վրա կկատարվի ապահովագրական հատուցման գումարի հաշվարկը՝ կախված ապահովագրական պատահարի բնույթից: Այդպիսի փաստաթղթերի թվին են պատկանում՝

ա) վնասված, ոչնչացված կամ կորած գույքի ցուցակը,

բ) ապահովագրական պատահարի վրա հասնելու պահին վնասված, ոչնչացված և (կամ) կորած գույքի արժեքը հաստատող փաստաթղթերը,

գ) գույքի գույքագրման ակտերը, որոնք կազմված են գույքի վնասման (ոչնչացման) փաստի վերաբերյալ՝ ապահովագրական պատահարը վրա հասնելու ամսաթվին մոտ ամսաթվով,

դ) կատարված աշխատանքների և ծախսերի մասին տեղեկանք,

ե) վերանորոգման (վերականգնողական) աշխատանքների կատարման նախահաշիվը (հաշվարկը),

զ) այլ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարելի է գաղափար կազմել Ապահովադրի կրած վնասների մեծության վերաբերյալ:

12.1.14 ԿԱՏԱՐԵԼ օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

**12.2. Ապահովադիրն իրավունք ունի՝**

12.2.1 Ապահովագրողից պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի իր պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա).

12.2.2 Ծանոթանալ Կանոններին.

12.2.3 Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների կամ ապահովագրական գործակալի միջոցով.

12.2.4 Օրենքի, այլ իրավական ակտերի, Կանոնների և Պայմանագրի համաձայն ստանալ ապահովագրական հատուցում՝ իրական վնասի չափով:

12.2.5 Պայմանագրում նշել անձի (Շահառու), որն ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրավունք կունենա ստանալ ապահովագրական հատուցում:

12.2.6 Պայմանագիրը կորցնելու դեպքում ստանալ դրա կրկնօրինակը.

12.2.7 Իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով իրեն վերապահված կամ չարգելված այլ գործառնություններ:

**ԲԱԺԻՆ 13. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

13.1 Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրողի կողմից օրենքին, այլ իրավական ակտերին, Կանոններին և Պայմանագրին համապատասխան՝ հիմք ընդունելով Ապահովադրի (Շահառուի) հայտարարությունը, ինչպես նաև վնասի պատճառը և (կամ) չափը հավաստող՝ համապատասխան լիազորված մարմնի (մարմինների) կողմից հաստատված փաստաթուղթը (փաստաթղթերը):

13.2 Ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրված օբյեկտներին (այսուհետ՝ գույքին) պատճառված վնասի չափը չգերազանցող չափով:

13.3 Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալու նպատակով պետք է լրացնի և Ապահովագրողին ուղարկի սահմանված ձևի գրավոր դիմում (դիմում հայտարարագիր): Եթե Ապահովադիրը չունի այդ դիմումի ձևը, ապա նա կարող է այն ստանալ Ապահովագրողից կամ նրա ներկայացուցչից:

13.4 Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է ներկայացնում նաև Պայմանագրի իր օրինակը:



13.5 Ապահովագրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող են կազմել վթարային հավաստագիր: Այդ նպատակով նրանք իրավունք ունեն ապահովագրական պատահարի հետ կապված լրացուցիչ տվյալներ հավաքագրել իրավապահ մարմիններից, պետական կառավարման մարմիններից կամ այլ անձանցից, որոնք տիրապետում են պատահարի առաջացման հանգամանքների մասին տեղեկատվությանը:

13.6 Ապահովագրողը պատահարի առաջացումից հետո իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների՝ ապահովագրական պատահարի պատճառները բացահայտելու և վնասի չափը ճշտելու համար, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելիս հիմնվելու վերջիններիս եզրակացությունների վրա:

13.7 Անհրաժեշտության դեպքում տեղի ունեցած պատահարի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով Ապահովագրողը կարող է դիմել պետական մարմինների, կազմակերպությունների կամ այլ անձանց, ովքեր տիրապետում են ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկատվությանը:

13.8 Ապահովագրողն իրավունք ունի անձամբ հետաքննելու և պարզելու ապահովագրական պատահարի հանգամանքները և պատճառները:

13.9 Ապահովադիրը նույնպես իրավունք ունի նշանակել փորձագետ-սյուրվեյեր՝ վնասի ծագման պատճառները որոշելու և (կամ) դրա չափերը գնահատելու համար:

13.10 Պայմանագրի Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր կողմից նշանակված փորձագետի (սյուրվեյերի) ծառայությունների վճարման ծախսերը:

**13.11 Վնասի չափը որոշվում է՝**

ա) **Ապահովագրված գույքի լրիվ կործանման (ոչնչացման) դեպքում՝** ապահովագրական հատուցման չափը հաշվարկվում է ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին գույքի իրական արժեքի չափով՝ հանելով այն մնացորդների արժեքը, որոնք կարող են վաճառվել կամ օգտագործվել գործնական նպատակներով:

բ) **Ապահովագրված գույքին պատճառված վնասի դեպքում՝** ապահովագրական հատուցումը հաշվարկվում է դրա վերականգնման ծախսերի գումարի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափը, իսկ տվյալ պատահարի կամ գույքի համար առանձին պատասխանատվության չափ նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ պատասխանատվության չափը:

Վերականգնողական ծախսերն իրենց մեջ ներառում են՝

- վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի գնման ծախսերը,
- վերանորոգման վայր նյութերի տեղափոխման ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների վճարման ծախսերը՝ բացառությամբ արտաժամյա, գիշերային ժամերին և պաշտոնական տոնական օրերին աշխատանքի համար աշխատավարձի հավելումները, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ընդ որում լրացուցիչ ծախսերը, որոնք կախված են աշխատանքների շտապ լինելու, շինարարական նյութերի տեղափոխման միջոցի փոփոխության, ապահովագրված օբյեկտի նախագծի կատարելագործման կամ փոփոխման, ժամանակավոր կամ պրոֆիլակտիկ վերանորոգման հետ, չեն ներառվում ապահովագրական հատուցման գումարի մեջ, եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Գույքի վերականգնողական ծախսերը հաշվարկվում են մասհանելով վերականգնման (վերանորոգման) գործընթացում փոխարինվող նյութերի և պահեստամասերի մշակման արժեքը: Եթե իրականացվում է վնասված մասերի փոփոխում, չնայած որ հնարավոր էր դրանց վերանորոգումը առանց ապահովագրված գույքի շահագործման անվտանգությանը վտանգ սպառնալու, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովադիրին այդ պահեստամասերի վերանորոգման արժեքը, բայց ոչ ավել, քան դրանց փոխարինման արժեքը:

գ) **Ապահովագրված գույքի գողության, հափշտակության դեպքում՝** ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահին դրա ապահովագրական (իրական) արժեքի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը, իսկ տվյալ պատահարի կամ գույքի համար առանձին պատասխանատվության չափ նախատեսված լինելու դեպքում՝ տվյալ պատասխանատվության չափը:

Գույքի վերականգնման ծախսերի մեջ չեն ներառվում՝

ա) Ծախսերը, որոնք կապված են ապահովագրված գույքի փոփոխման կամ բարելավման հետ:

բ) Ծախսերը, որոնք կապված են ժամանակավոր (օժանդակող) վերանորոգման կամ վերականգնման հետ, եթե այդ վերանորոգումը չի հանդիսանում ամբողջական վերանորոգման մի մասը, և եթե Ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

գ) Սարքավորումների վերահավաքման, պրոֆիլակտիկ վերանորոգման և սպասարկման հետ կապված ծախսերը:

13.12 Ապահովագրողը հատուցում է նաև այն խելամիտ և նպատակաուղղված ծախսերը, որոնք Ապահովադիրը կատարել է Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասների նվազեցման (փրկման ծախսերը) նպատակով, եթե այդպիսի ծախսերի կատարումը անհրաժեշտ էին կամ կատարվել էին Ապահովագրողի ցուցումով: Այդ ծախսերը հատուցվում են, եթե դրանք անհրաժեշտ էին կամ կատարվել էին Ապահովագրողի ցուցումները կատարելու համար, եթե նույնիսկ ձեռնարկված միջոցները ապարդյուն էին:

13.13 Մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների հետևանքով տրվող ապահովագրական հատուցման գումարը չի կարող գերազանցել Պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը: Եթե Պայմանագրի գործողության ընթացքում իրականացվել է ապահովագրության հատուցում ապահովագրական գումարից պակաս չափով, ապա Պայմանագիրը շարունակում է իր գործողությունը՝ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի և վճարված ապահովագրական հատուցման տարբերության չափով:



13.14 Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը ցածր է Ապահովագրության պայմանագրի կնքման պահին ապահովագրված գույքի ապահովագրական (իրական) արժեքից, ապա ապահովագրական հատուցումը կվճարվի ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի մի մասի չափով՝ ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի համամասնությամբ՝ մասհանած ոչ պայմանական չհատուցվող գումարը: Սույն դրույթը տարածվում է ինչպես ապահովագրության օբյեկտի, այնպես էլ առանձին դրա յուրաքանչյուր մասի վրա:

13.15 Եթե Ապահովադրին են վերադարձվել նրանից գողացված (հափշտակված) ապահովագրված գույքը, ապա վերջինս պարտավոր է 10 օրվա ընթացքում Ապահովագրողին վերադարձնել վճարված ապահովագրական հատուցումը՝ մասհանած գույքի գողության հետևանքով առաջացած անհրաժեշտ ու դրա վերականգնման (վերանորոգման) աշխատանքների համար կատարված ծախսերը:

13.16 Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովադրի, նրա ներկայացուցչի կամ Շահառուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված պատահարի առաջացման հետ, ինչպես նաև օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում:

13.17 Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին Կանոններում նշված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում պարտավոր է օրենքի, այլ իրավական ակտերի և Կանոնների համաձայն ընդունել ապահովագրական հատուցումը վճարելու կամ մերժելու մասին եզրակացություն (որոշում):

13.18 Ապահովագրողն ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումը պատշաճ կերպով՝ Ապահովադրին (Շահառուին) անձամբ հանձնելու միջոցով տրամադրում է Ապահովադրին (Շահառուին) կամ այդ որոշումը փոստային առաքմամբ ուղղարկվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա գտնվելու վայրով կամ փոստային հասցեով:

13.19 Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից 20 օրվա ընթացքում Ապահովագրողը պարտավորվում է միանվագ իրականացնել ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրողը և Ապահովադիրը (Շահառուն) ապահովագրական հատուցման վճարման այլ կարգ կամ ժամկետ չեն համաձայնեցրել:

13.20 Ապահովագրական հատուցումը, որպես կանոն, վճարվում է այն արժույթով, որով ապահովագրավճարը մուծվել է Ապահովագրողին:

13.21 Ապահովագրական հատուցման նվազեցման կամ հատուցման մերժման դեպքում Ապահովագրողի կայացրած պատճառաբանված որոշումը հնգօրյա ժամկետում պատվիրված նամակով առաքվում է Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության հասցեով:

13.22 Ապահովագրական հատուցման մերժման դեպքում, եզրակացության մեջ պետք է նշվեն մերժման պատճառները:

13.23 Ապահովագրական հատուցման վճարման մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ԲԱԺԻՆ 14. ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ**

14.1 Ապահովագրական հատուցում վճարելուց հետո հատուցված գումարի սահմաններում Ապահովագրողին են անցնում Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի Ապահովագրողի կողմից հատուցված վնասի պատճառման համար պատասխանատու անձի նկատմամբ:

14.2 Ապահովադիրը (Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել նրան բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին փոխանցված վնասի պահանջի իրավունքն իրականացնելու համար:

14.3 Եթե Ապահովադիրը ՀՐԱԺԱՐՎԵԼ Է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՁԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումը ԱՆՀՆԱՐԻՆ Է ԳԱՐՁԵԼ Ապահովադրի (Շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ԱԶՍՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումը արդեն վճարված լինելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Շահառուից) ետ վերադարձնելու ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարները:

**ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

15.1 Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը լուծվում են դատական կարգով՝ օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:

15.2 Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

15.3 Վեճերի առաջացման դեպքում Կանոններով չկարգավորված հարցերը կարգավորվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով: